ՀՆՉԱԿ

Բանակալ սուլթանի կառավարութեան չարչարանքներու դժոխային հնարքներէն և գործիքներէն սոսկալի տանջանքներով և աղիողորմ հառաչներով բանտի մէջ ՄԵՌԱՒ ՅԱԿՈԲԸ — մանիչ Սուքիաս քահանայի անձնուրաց թէօրիստը։ Նոյնանման դէպք տեղի ունեցաւ ի Մուշ կենտրոնական բանտին մէջ ԳԷՈՐԳ ԷԹՄԷՔՃԵԱՆ Հաճընցի ազնիւ և համեստաբարոք երիտասարդի հետ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ.

—

Հայրենակի՛ցք.

Բանակալ սուլթանի կառավարութեան միջնադարեան չարչարանքներու դժոխային հնարքներէն և գործիքներէն սոսկալի տանջանքներով և աղիողորմ հառաչներով բանտի մէջ ՄԵՌԱՒ ՅԱԿՈԲԸ — մանիչ Սուքիաս քահանայի անձնուրաց թէօրիստը։ Նո՛ր նահատակ մը սուլթանի ոստիկանութեան նորահնար սակատանջ փորձութեանց։ Ծայրայեղս տաքցրած երկաթէ գործիքներու, խարազանի, կրակի վառօդոյ բռնկման և նոյնօրինակ բազմատեսակ անպատմելի կերպերու միջոցաւ տանջուած մահ մը, որոյ յար և նմանը վերջերս տեղի ունեցաւ ի Մուշ կենտրոնական բանտին մէջ ԳԷՈՐԳ ԷԹՄԷՔՃԵԱՆ Հաճընցի ազնիւ երիտասարդին հետ։

Հայե՛ր.

Այլ ևս չափն անցած է։ Թիւրքական բանտերը դարձած են միջնադարեան սոսկալի չարչարանաց ու փորձութեանց գաղտնի վայրեր։ Մեր, մե՛ր հարազատ եղբարքը, Հայկական Յեղափոխութեան ազնիւ ու անձնուրաց զինուորները, աւաղին թուով Թիւրքական տաժանելի բանտերին մէջ ինկած՝ կը տառապին այսօր։ Յանուն Հայ ժողովրդեան բարօրութեան ու ազատութեան՝ վայրենի կառավարութեան դարևոր կապողի բռնութեանց և մեր ամօթալի և ստոր ստրկութեան դէմ ելած մեր այդ քաջարի եղբայր Հերոսներու կեանքը վտանգի է ենթարկուած այսօր բանտերի մէջ։ Սուլթանի կառավարութեան գաղտնի նախադիծն է մէկ մէկ խողխողել բոլոր հայ բանտարկեալները, որոնց թիւն այժմ հազարէն կանցնէ։ Այդ բազմաթիւ բանտարկեալներ այսօր մատնուած են դառն չարչարանաց։ Մութ բանտերի խորքէն, ընկած թիւրք էնքիզիթօրներու ձեռքը, չարչարանաց սոսկատանջ աղաղակով մեր եղբարքն օգնութեան կը կանչեն մեզ։ Նոքա զարմանալի դիւցազնութեամբ կը դիմանան դժոխային գործիքներու փորձութեանց, սիրտ ու հոգի առած Ազատութեան սուրբ գաղափարով։ Նոցա տանջանաց աղէխարշ տեսարանը կը նկարուի մեր աչքին իր ամբողջ ահաւորութեամբ։ Արդար զայրոյթը, հալածեալի կատաղութիւնը կը զարնէ մեր գլխուն։ Վրէժխնդրութեան սուրբ երդումն այսօր մեր պարտականութիւնն է։

Հայրենակի՛ցք.

Բայց այդ, սուլթանի կառավարութեան հալածանքները Հայոց դէմ նոյն իսկ Թիւրքիոյ մայրաքաղաքին մէջ հասած են իրենց գագաթնակէտին։ Օր չկայ, որ տասնեակ հայեր չը ձերբակալուին, անմեղ կամ մեղաւոր՝ առանց քննութեան։ Հայ մայրերը կողբան իրենց որդոց կորուստը, իսկ ընկերքն՝ իրենց ընկերներու։ Շունչ առնելն անգամ անկարելի է դարձած Բիւզանդիոնի մթնոլորտին մէջ շնորհիւ սարսափէն մոլեգնած սուլթանի կառավարութեան։ Ամեն կողմ կը թագաւորէ կառավարութեան թէօրը։

Հայրենակի՛ցք.

Յեղափոխական գործոյ Կուսակցութիւնը, որ գիտցաւ վեհարար բարձրացնել Ազատութեան դրօշակը, առաջացնել նշանաւոր յեղափոխական շարժումներ Հայոց մէջ, արժանաւոր դատաստանով սպառել վատ դաւաճաններն ու լրտեսները և այդ ամենով վառել ու բորբոքել համայն հայ ազգին մէջ յեղափոխական ոգի և Ազատութեան խղճը — այդ Կուսակցութիւնն այսօրուան ազգային վճռականին մէջ հայրասիրութեամբ կը դիմանայ սուլթանի կառոյցի հարուածներուն և հաւատարիմ իր մեծ կոչման բարձրութեանը՝ նա պիտի դիմանայ անյողդողդ և յանդուգն կերպով շարունակել իր յայտարարած սուրբ պատերազմն ընդդէմ բարբարոս թիւրք կառավարութեան,

Նա պիտի դիտնայ աջողութեամբ պահել իր մեծ դերը Սայնպիսի վիճակի մը մէջ մեր, հայերս, պարտակա. նութիւնը յայտնի է, թէ ինչ է։ Պատժին՝ պատիժ, արեան՝ արիւն, մահուան՝ մահ — ահա՛ մեր ղէնքն այժմ արիւնածարաւ, վայրենի ու գազանարարոյ կառավարութեան դէմ։ Յեղափոխական մեծամեծ դէպքերու ժամը երթալով կը մօտենայ որոյ զոյժը սարսափելի պիտի լինի մեր անարգ թշնամուն։ Թո՛ղ ամէն մի հայ ընդ միշտ պահէ իր սրտին մէջ հայոց ազատութեան համար թիւրք անիրաւ էնքիղիթօրներու ձեռքն ընկած ազնիւ եղբարց յիշատակը և վրէժի զգացումը թո՛ղ եռոյ նորա մէջ մինչև լուծումն։ Թո՛ղ ամէն մի հայ պատրաստ լինի և թո՛ղ վառ պահէ իր սրտին մէջ այն Սուրբ Գաղափարը որ հայ ժողովրդեան կը մղէ դէպի մեծ պատերազմի արիւնահեղ դաշտը։ Թո՛ղ գիտնանք մենք, ամէն հայերս, լինել արժանի դիւրներ Ազատութեան, յանուն որոյ կը կրենք այսօր ամենախիստ չարչարանքներ և որոյ շնորհիւ վաղը կլինինք մենք երջանիկ։ Թո՛ղ կործանուէ բռնութիւն և կեցցէ՛ Ազատութիւն։

Կեցցէ՛ Հայ Ժողովուրդ։

Կեցցէ՛ Յեղափոխութիւն։

Հնչակեան Յեղափոխական
Կուսակցութիւն։

ԻՆԿՎԻԶԻՑԻՍ։

Անտարակոյս, Թիւրքիան, որ զանվում է դեռ իր զարգացման բարբարոսական շրջանում, յանկարծից ուզում է աւելի քաղաքակրթված երևալ։ Բարբարոսական շրջանից նա ուզում է թռիչ անել միջնադարեան՝ առաջինից աւելի զարգացած՝ շրջանի ափը։ Եւ իրեւ ապացոյց իր ա.դ նշանաւոր քայլին այն կայ, որ Թիւրք կառավարութիւնը սկսել է գործադրել միջնադարեան ամենագիշերիկ ու ամենաէական յատկանիշը — ինկվիզիցիան (inquisition)։ Բայց յանկարծ վառվելով այդպիսի ապաջապիմական եռանդով, Թիւրքիան մոռացել է, որ բնութեան ու ազգերի բնական զարգացման օրէնքի հակառակ այդպիսի թռիչի հետևանքներն իրեն կարող են շատ ծանր լինել։ Այդպիսի հոկայ թռիչներ անելիս ամենասարսրական վտանգն այն է, լինում, որ . . . ոտք է կտրվում։ Դա նման է այն երեխային, որ խաղով յափշտակված՝ փոսերի վրայով է թռչում, չհանկանալով դրա վտանգը և մէկ անզգոյշ շարժումից սայթաքում ու փոսի մէջն ընկնում։ Թիւրքիան էլ չգիտէ այն մեծ վտանգը, որ իրեն սպասնում է այդպիսի թռիչ անելիս։ Հարբեցած բռնակալական մոլեգնութեամբ հայ յեղափոխականների յաղթական գործունէութեան ու ստուար այժի դէմ և զայրացած իր տկարութեան վրայ, նա միջնադարեան անբնականալի խիստ չարչարանքների, ինքվիզիցիայի է ենթարկում բազմաթիւ ձերբակալված հայ յեղափոխականներին։ Եւ ի՞նչ. մարտիրոս յեղափոխականները թիւրք կառավարութեան դորձադրած տաժանելի չարչարանքներին ի՞նչ Մեծանում են, սպանվում են։ Ի՞նչ է ուզում անել այդպիսով սուլթանի բռնակալ կառավարութիւնը։ Խեղդել արդեօք մեզ ամենքիս իր չարչարանքների զորձիքներով. — դա ֆիզիքապէս նրան անհնարին է։ Իմանա՞լ արդեօք Յեղափոխական Կազմակերպութեան այս կամ այն մասնախմբի գաղտնիքները և նրա անդամների անունները. — դա չէ կարող լինել բայց ենթադրենք, որ իմացաւ, սակայն դրանով նա մեծ ճնաս չի հասցնիլ մի Կազմակերպութեան, որ այսօր մէկ ամբողջ ժողովուրդ ունի իր ետևը և այդ ժողովուրդն է, որ նրան տալիս է նիւթական ու բարոյական զօրութիւն։ Ուրեմն, սուլթանը պատերազմ է յայտարարում մէկ ամբողջ ժողովրդի դէմ, որի զգացողութեան աստիճանը հասել է մինչև յեղափոխական ոգու։ Շատ լաւ. հէնց այդ բոլէն էր ցանկալի հայ յեղափոխականներին և մենք կգիտանք օգտվել բռնապետ սուլթանի ու նրա խելագարոյս կառավարութեան այդ անտակտ ու ճարահատված ընթացքից։ Բոլէն վտանգաւոր է նրա համար, մինչդեռ մենք ամեն բան ունենք վատակելու և ոչինչ կորցնելու։ Շնորհով կառավարութեան վայրագ հալածանքներին ու ինկվիզիցիային այսօր ամենաանտարբեր հայերի սիրտն անգամ ալեկոծված է թշնամու դէմ։ Սուլթանի բռնաւոր տնօրինութիւններն այդ կէտին պիտի հանգէին, ինչպէս էլ եղաւ։ Մենք ծափահարում ենք նրան, որ իր կառավարչական այդպիսի անհերքելի ընդունակութեամբ նպաստում է մեր Ս. Գործի աջողութեան, իր դէմ զայրացնելով ամեն մի հայի. — ծափահարում ենք և շնորհակալ ենք նրանից։ Բայց այդ ստոիճան հասնելուց յետոյ՝ թո՛ղ այսուհետև զգոյշ լինի. կրակի մէջ նա իւղ ածեց և թող դրանից ծագող բռնկման վտանգին էլ դիմանալու կարողութիւնը հաւաքէ։ Այսուհետև մենք կլինենք աւելի խիստ ու աւելի անխնայ դէպի նա։ Այսուհետև թո՛ղ սպասէ նա այդպիսի գործողութիւնների մեր կողմից, որոնց շարժառիթը միմիայն ինքն է, որոնց պատճառն ու բարոյական պատասխանատուութիւնն ընկնում է միմիայն իր վրայ, որոնց մեծամեծ հետևանքները սարսափելի բոթ կլինի իրեն և վաղո՛ւց ըղձած, վաղո՛ւց կարոտած աւետիս թշնամու, բայց արդէն յեղափոխական Ս. Գործը սկսած օրից այլ ևս ո՛չ ստրուկ հայ ժողովրդին։

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ։

(Սեփական թղթակցից)

Կ. Պոլիս 7 հոկտեմբեր 1890.

Թիւրք կառավարութեան սոսկալի թէռօրն կըսիրէ այժմ մայրաքաղաքիս մէջ։ Մոլեգնած գազանն ամենայն օր շարունակ ձերբակալութիւններ կանէ, ամեն պատահածն բանտ և ոստիկանատուն կըտանէ։ Ամենուն անուն-

ները զինւին թիրթիր կը պահանջէ։ Բանտէն շատեր այլ ևս չըլլալու լոյս աշխարհ տեսնան, շատեր պիտի նաև իրենց մահ գտնան։ Այո՛, մահ։ Միջնադարեան սոսկալի չարչարանքներ այժմ կը գործադրուին բանտերին մէջ հայ ձերբակալեալներու վրայ։ Այո՛, մահ, և աչքառուտ օրինակ մը, զոր մեզ յայտնի է, իսկ ո՛վ գիտէ թէ կրկին չեկան նոյնպիսի օրինակներ։ Այն հաստատ է, որ շատեր ձերբակալեալներէ այսօր մահամերձ վիճակի մը մէջ կը գտնուին շնորհիւ կառավարութեան չարչարանաց։ Սուքիաս ամիրեան զաւածանի թէոփիլեան Յակոբը բանտին մէջ այնչափ խոշտանգած ու չարչարած են, որ երիտասարդը ծանրապէս հիւանդացած էր. „Վեհափառ Սուլթանը իր անհուն ողորմածութեամբ գթալով նոյն իսկ այսպիսի եղեռնագործի մը վրայ, հրամայեց փոխադրել զինք կենտրոնական բանտի հիւանդանոցն և անդ լաւ ուտեստ և դեղօրայք մատակարարել իրեն, որպէսզի շուտով առողջանայ". — այսպէս գրեցին անամօթ և անմիտ կառավարութեան համամիտ գործիքները՝ տաճկական լրագիրները։ Եւ հարկաւ անձնուրաց Յակոբն այնպէս գեղեցիկ զարմանեցին, նորա բազմավէր մարմինն այնչափ լաւ խնամեցին, որ նա դիմելով իր դահիճներուն „աւէ՛ք, աւէ՛ք հոգիս", հառաչելով, աղեխարշ տանջանաց մէջ և ցաւերէն պատճառեալ աղեկտուր ճիչերով հոգին կը փչէ։

Սոյդ աղբիւրէ կը հաղորդեն, որ Յակոբին բաղդին արժանացած է նաև ի Մուշ Գէորգ Էթմէքճեան անուն հաճընցի ազգասէր և եռանդուն երիտասարդը որ երկու ու կէս տարի առաջ հանրածանօթ Մշոյ դէպքն յառաջ բերաւ, քաղաքական սպանութեան յանդուգն փորձ կատարելով կաթոլիկ Առաջնորդին վրայ որ իբր ազգադաւ ոմն կը համարուէր։ Մուշէն վերջերս հասած տեղեկութեանց նայելով՝ տէօրական յանդուգն գաղափարի գործադրող այդ երիտասարդն Մշոյ բանտին մէջ մեռած է, երկու օր ոստիկան տաճիկներու ձեռամբ խիստ տանջուելէ և չարչարուելէ ետք։

Տեսնելով որ թիւրք կառավարութիւնն այսպիսի կատաղի ընթացք մը բռնած է, Հնչակեան Կուսակցութեան Կ. Պոլսոյ Մասնախումբն՝ նախարարներուն սպառնական նամակներ ղրկած է ուր կը յայտարարէ նոցա թէ Յեղափոխական Գործադիրն որոշած է նոցա պատժել, եթէ նոքա շարունակեն իրենց միջնադարեան չարչարանաց մեքենայութիւնքն։ Այդ նամակներն, մանաւանդ այն Կուսակցութեան կողմէն, որ կէս տարիէն ի վեր յանդուգն կերպով կը գործէ յոյժ համարձակ և սուլթանի մտատանջութեան և կատաղի հնարքներու ամենագլխաւոր առարկան կը կազմէ, մեծ շփոթութիւն և տագնապ առաջացուցած են կառավարական շրջաններու մէջ։

Զայրոյթն ընդհանուր է մայրաքաղաքիս հայոց մէջ։ Կառավարութիւնն այդ լաւ գիտէ և կը ջանայ իր թէռօ-րով սարսափ ազդել նոցա վրայ։ Հարկ չկայ իսկ ըսելու որ հակառակը կառաջանայ։ Սաստիկ լարեալ դրութեան մէջ են հայերն. սև նախագուշակութիւնն Բ. Դրան համար, որ կորանցուցած ըլլալով իր գլուխն և կատաղութենէն աչքերն արիւնոտելով չի ըմբռներ իր ընդունած ընթացքին հետեւանքները։ Իր շարունակ ձերբակալութիւններով կառավարութիւնը կուզէ ձեռք ձգել Հնչակեան Կուսակցութեան «Գօմիթէն», որ կը կարծէ թէ Պոլիս կը գտնուի և նորա անդամներ ձերբակալելով հայոց յեղափոխութեան ամեն վտանգ վերջացած պիտի լինի։ Խե՜ղճ խելացնորեալ կառավարութիւն. Կուսակցութիւնն, զոր դու կըկարծես թէ ոչնչացնելու կարող ես, դեռ շա՜տ խաղեր պիտի խաղայ գլխուդ վրայ . . .

Գաւառաց մէջ նշանաւոր անցքեր տեղի կունենան։ Լուրեր կուգան թէ տասն հազար զէյթունցի հայեր ապստամբած են և սոսկալի կռիւ մը տեղի ունեցած է նոցա և թիւրք զօրաց մէջ։ Մեծ յուզում կը տիրէ այն կողմերն հայ ժողովրդեան մէջ և արիւնահեղ դէպքերու նախագուշակութիւնքն ամեն քայլափոխին աչքի կզարնեն։ Լուրեր կըպտըտին թէ Երզնկայի մօտերն հայերու և թիւրքաց մէջ նոյնպէս մեծ կռիւ մը տեղի ունեցած է առաջիններու յաղթութեամբ։ Ալաշկերտի մօտերն նոյնպէս նաև Վանայ և Մշոյ կողմերն մեծամեծ կոտորածներ եղած են քրդաց և թրքաց ձեռամբ։ Երկրին ընդհանուր դրութիւն խիստ տագնապալից է. ամեն տեղեր հայերն գրգռեալ վիճակի մը մէջ կը գտնուին . . . . և սուլթանի կառավարութիւնն ինչ ընելիքը չը գիտէ . . . . Խե՜ղճ ողորմելի . . . .

Պերճ.

— . —

(Մասնաւոր Թղթակցից)

—

Կ. Պոլիս, 9 Հոկտեմբեր 1890.

Հայկական խնդիրը շատ սուր կերպարանք առած է վերջին դէպքերէն յետոյ։ Թիւրք կառավարութիւնը ժողով ժողովի վրայ կը գումարէ լուծելու համար (զու խմա՛ հալեցնելու համար) անիծեալ խնդիրը։ Տաճատ վարդապետը տարբանակող, փաստաբան Խաչիկը սպանող անձինք իբր թէ ձերբակալուեր են ըստ պաշտօնական յայտարարութեան Թրքաց։ Բարձր տեղէ եկած սաստիկ հրամանի հակառակ ոստիկանութիւնը չը կրնալով գտնել բուն հեղինակները, յատուկ ժողով մը կորոշէ այլեր բռնելով, զանոնք իբր հեղինակ ներկայացնել վերջին սրիկայական (իրենց բառերն են) դէպքերուն և այսպէս զսպել բարձրագոյն զայրոյթը։ Սուլթանը խենթեցած գազան մ'է դարձած. արիւն կուզէ խմել, որուն որ ալ ըլլայ այն։

Խստութիւնք հարիւրապատիկ աւելցած են. խուզարկութիւնք ու ձերբակալութիւնք բազմաթիւ։ Մօտերս ծանօթ վաճառական Խօրասանճեաններու տունն ու խանութը խուզարկելով երբ ոչինչ կը գտնեն երգարան մը կը ձգեն և հոս գտանք ըսելով կը գրպարտեն, կը բանտարկեն քսան և չորս ժամ ու հազիւ կարձակեն։

Ցան ու տեղ խուզարկելէ չաւուշ աղիր մը եղած է, անշուշտ, անօթի Թրքաց։

Մի ամիս առաջ Հայ երիտասարդներէն անուամբ Աստուր Բազարի ճամբուն վրայ ստիպելով կը բանտարկեն իբրև դրդիչ թէև իրօք խեղճը ամուր Հայի կարօտ ինքնիրքեն զատ ուրիշին կը մտածէր անշուշտ։ Մի ուրիշ էֆենտի Նիկողոս անուն բոլորովին անմեղ կըսեն թէ քանի օրէ ի վեր մահապատժի բանտի մէջ կը տառապի Բերայ Պուլսի մը ոչխատաւորներ ձերբակալուած են ու բանտարկուած դարձեալ։

Աւելորդ է յիշել թէ սոյն ամէնքն ալ առանց ոևէ փաստի, ապացոյցի բռնուած են։ Բանտարկեալներն կրակով, խարազանով, այլ և այլ գործիքներով սաստիկ կյոչոտեն ու կը չարչարեն։

Յանձառ վարդապետ Ադրիանոյ աքսորուած է։ Տ. Սարգիս տանը կը մնայ ի Թոքատի, ուր կայ և Թող մնայ բանտարկեալ։ Յուսարար Յովհաննէս Երուսաղէմ ի Քրիստոս աքսորուած է։ Հայ լրագրաց գրաքննիչ պաշտօնեայն իր ծերութեանը պատճառաւ հրաժարեցուելով, մի երկուսարդ ընտրուած են ա. Աճէմեան։ Տեսնենք նա, որ երբեմն իբրև խմբագիր Ֆ ա ր դ ի Պ օ ս ֆ ո ր (Phare du Bosphore) լրագրի մամլոյ ազատութիւնը կը ջատագովէր և զաւեշտական լրագրոյ մը անօրինակ հայասիրութեան վրայ կըքանչցնէր չասէրը, ի՞նչպէս պիտի կատարէ իր պաշտօնը ․․․

Թուրք թերթերն կը ճառանակեն իրենց զրպարտութիւնները Հայոց նկատմամբ։ Այսպէս երէկի Թուով Սաադէթը „մխիար, անպաշ, որկեր, պտըը պօղոս" կանուանէ Հայ գործիչները։ Անճարներն ուրիշ կերպ սովոր չեն խօսել, չականներին մէջ են սորված այդ լեզուն։

Արմէնակ ․

— ․ —

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ·

—

(Անձնական աղբիւրից)

—

Կարնոյ կառավարիչն է զինուորական Ֆէրիք Հիւսէյին փաշայ ․ — Տրապիզոնի ճանապարհով զօրքեր կերթան երկրի խորքերը։ Նման Վանայ և Պիթլիսի (Բաղէշ) և Կարնոյ նահանգի պահեստի զօրքերը ի զէն կոչուեցան ․

Բաղէշն ձեռք տուաւ, մարեցաւ Հայոց այնտեղի ճրագը ․ Բաղէշն գաւառի Հայոց տներու մէջ և ոչ մի տաւար կենդանի չմնաց, բոլորն յափշտակուեցան։ Գիւղէ ի գիւղ երթալն անկարելի է և ապահովութիւն ամենևին չկայ, այնպէս որ մահմետականներն քրիստոնէից և քրիստոնեայք մահմետականների տուները չեն համարձակիր երթալ կամ հիւր ըլլալ․ յարաբերութիւնք հիմնովին կտրուած են։

Տ է լ ի Պ ա պ ա (Բաղէշ) և այլ գիւղերն յայտնապէս կողոպտուեցան։ Ալաշկերտու մէջ ամէն օր գողութիւն և աւազակութիւն և չծնուած հանձերի դէպքեր հրձգութիւնք կայ։ Այս բոլորն ալ կառավարչական թելադրութեամբ լինելն կը հաստատուի այս կերպով որ երբ Հայերը կը բողոքեն կը պատասխանեն թէ „Դուք արդէն ապստամբ էք և հետևաբար ձեր գանգատներ չինծու է, կորսուեցէք"։ Վան ամենևին հանգարտ չէ․ տէրութեան կողմէն Թրքաց զէնք բաժնուեցաւ, ինչպէս և փամփուշտ։ Մ ո կ ս ա յ կողմի Թրքերն առևանգեցին չորս հարս ․ Վանայ Հայերն այս տեսնելով կուռարկեցան․ քիչ էր մնացել որ կռիւ մը պատահէր ․ սակայն վալին (կառավարիչն) խօսք տուաւ բերելու․ առևանգուածն կը մնայ։ Երեք Թրքաց կողմէ բռնուած են ․ չորս ձերբակալուեցան Հայոցմէ։ Վերջապէս երկու ազգին մէջ ալ երկիւղ կայ։

Վանայ կառավարութիւնը ի պաշտօնէ Հայոց Քաղաքային ժողովոյն գրուեցաւ թէ „Հայերը ատրճանակ կը կրեն, որ գէշ նշան է, այլ պէտք է սարսափելութիւն տալ հաւատարիմ մնալու, և կասկածելի անձինք կառավարութեան յանձնելու ․ հակառակ պարագային հրամայուած է զօրաց որ զէնք գործածեն։"

Հայք եւ ․

„Թէ կասկածելի անձինք ըլլալը չենք գիտեր և թէ ապրագրութիւնը մասին կարևորութիւն չկայ։"

Ի Մուշ Մուսա բէկի որդին և իւր մարդիկը գիշեր ցերեկ անհամբերելի հարստահարութիւնք կանեն։ Այր գէն Վ ա ր դ ե ն ի ս գիւղի դէպքի համար որ ձեզ ծանօթ է 72 Հայ բանտարկեալ կըկենան։

Գաւառ Բ ա ղ է շ ի ն ժողովուրդը ահ և դողի մէջ է․ քանզի տեղւոյն Շէյխերը խօսք ըրած են զՀայերը որէ անցունել, և այդ կարծիք իրագործելու հրամայուած է ․ կառավարութիւնն ալ թէև այդ խորհրդին անգիտացած է, սակայն առջի առնելու չաշխատիր իբր պատերազմի մը ժամանակ է դարձեր։ Կարին, Վան, Բաղէշ, Պայազիտ, շրջակաները գտնուած զօրաց փամփուշտ բաժնուեցաւ և կը կրեն այժմ։ Բացի սմանէ քրդաց և Թուրք հասարակաց զէնք և ռազմամթերք տրուեցաւ գաղտնի ․ ունեցածներն ալ ազատ ու անարգել կը կրեն, մինչ Հայոց վրայ երբ ատրճանակ մը դանակ կը գտնեն։

Գարազիլիսէ երեկի Հայու մը 800 ոչխարները կը տանեն և ամէն օր լոյս ցերեկով ցորենի դէզեր կայրեն։

Ի Պուլանըխ 3 Հայեր ցորենի դէզերի վրայ պահպանութիւն արած ատեն դէզերի հետ միասին կայրեն։

Ալաշկերտու ճանապարհի վրայ 6 վանեցի մշակներ որ Թիֆլիսէն կը վերադառնային հայրենիք՝ քիւրդերէն 6ն ալ կըսպաննուին ու կը կողոպտեն իրենց փողերը։

⁂

Շնորհակալութեամբ ստացանք իբրև նպաստ „Հնչակին" հետևեալ գումարները ․ — Պ․ քաղաքից Ս․ —ից 100 ռուբլ․ լրագրիս ամսական 20 Փր․ նպաստ Ընկերութենէց Ա․ ի միջոցով 100 Փրանկ։ Ե․ Գ․ քաղաքից Եփրատի ձեռամբ 60 Փրանկ։ Ամերիկա՝ Նիւ Պօրտ Ր․ Ս․ 5 դոլլար։

⁂

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ուղարկել հետևեալ հասցէով․

Montpellier (France) · — M. Beniard · Poste Restante ·

Լոնդոն ․ Հայկական ազատ տպարան ․